բակի մէջ մեռաւով։ Ջահան Շահի մահից յետոյ, որ եղաւ 1465 թուին, նրա որդի՝ Հայոց մարզպան Հասան Ալու եւ Ջհանգիր ամիրայի որդի՝ Ուզուն Հասանի մէջ պատերազմ ծագեց. եւ այս վերջինը յաղթելով առաւ Թավրէզ եւ տիրեց բոլոր Ատրպատականի, Ինչպէս եւ Պարսկաստանի վրայ։ Այնուհետեւ Պարսից եւ Օսմանցւոց մէջ շարունակ կռիւ էր լինում, փոփոխակի յաջողութեամբ. եւ Ատրպատականն ու Հայաստանը զանազան անձանց եւ իշխանների իշխանութեան ներքոյ է ընկնում, մինչեւ որ, վերջապէս, 1491 թուին, Արդաբիլ քաղաքի Շէյխ՝ Հայտարի որդի Իսմայիլը զօրանալով, թագաւորեց Պարսից վրայ, գրաւեց Թավրէզ եւ Ատրպատականն ու Արարատեան աշխարհը, եւ 1500 թուին իր աթոռը հաստատելով Ասպահան քաղաքում, կոչուեց Շահ Իսմայիլ Սէֆէվի, եւ այսպէս Սէֆէվի հարստութեան հաստատողն եղաւ։ Այն օրից սկսուեց Ղզլբաշների տիրապետութիւնը։

Շահ Իսմայէլի դէմ պատերազմ հրատարակեց Օսմանեան մեծ սուլթան Սէլիմն 1513 թուին. եւ յաղթելով նրան՝ յետ առաւ Թավրէզ քաղաքն եւ այդտեղի բոլոր արուեստագէտներին, մեծ մասամբ Հայերից, 3000 Հայ ընտանիք, քօչեցրեց Կ.Պոլիս։ Այդ թուականից սկսած մինչեւ 1586 թիւը Թշուառ Հայաստանն եւ երկիցս Թշուառ Հայ ազգը մի օր, մի ժամ, մի րոպէ հանգստութիւն չունեցաւ Պարսից եւ Օսմանցւոց սրերի եւ կոտորածի երեսից։